ԹԵՄԱ 5

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Դաս 5.5. Հայաստանի Հանրապետությունը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում

1. Իրավիճակը նորից սրվեց 2022 թ. սեպտեմբերին, երբ Ադրբեջանը ՀՀ արևելյան սահմանի երկայնքով անցավ հարձակման: Թշնամին ռմբակոծում էր մեր ռազմական և քաղաքացիական ենթակառուցվածքները: Ագրեսորի գործողությունները դատապարտեցին բազմաթիվ պետություններ, միջազգային կառույցներ: Բայց այդ ամենը մնաց դատապարտելու մակարդակում, և Ադրբեջանը ոչ մի իրավական փաստաթուղթ հաշվի չի առնում: Ադրբեջանը զավթել է ՀՀ սուվերեն տարածքի մի մասը և դուրս չի գալիս:

Նախորդ դասում նշեցինք, որ, բացի տարածքից և աշխարհագրական դիրքից, պետության իրականացվող գործառույթներում հաշվի են առնում կարևոր այլ բաղադրիչներ ևս՝ բնակչության որակական և քանակական, տնտեսական զարգացման ցուցանիշները, ֆինանսական հզորությունը, բնական ռեսուրսներով ապահովվածությունը, արդյունավետ կառավարումը, ազգային միատարրությունը, քաղաքական կայունությունը, ազգային ոգին: Մեր պարագայում կարևորվում է նաև հայկական սփյուռքի դերը: Ավելի քան 60 երկրում ապրում է 7–8 միլիոնից ավելի հայ: Սփյուռքը լրացուցիչ լիցք է հաղորդում ՀՀ-ի արտաքին քաղաքականությանը, տնտեսական, քաղաքական և մշակութային ներուժին և բոլոր հնարավոր միջոցներով նպաստում ու ծառայում Հայկական հարցի արդարացի լուծմանը, Արցախի միջազգային ճանաչմանը: Խոշոր հայ համայնքների շնորհիվ է, որ ՀՀ հարաբերություններն առավել բարձր մակարդակի վրա են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իրանի, Լիբանանի, Արգենտինայի, Ուրուգվայի հետ:

2. ԽՍՀՄ տարիներին ՀՀ քաղաքաաշխարհագրական դիրքն ավելի հուսալի էր. Հայաստանը հզոր պետության մի մասն էր՝ անվտանգության բարձր երաշխիքով: Անկախության տարիներին մեր հանրապետությունը չեզոքացրեց հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման իրական վտանգը: Բայց միաժամանակ Արևմուտք-Արևելք լարվածությունը մեծացավ «սառը պատերազմի» տարիներին, որն անշուշտ հանգեցրեց նաև քաղաքաաշխարհագրական դիրքի որակական փոփոխության:

Եթե մինչև անկախացումը աշխարհաքաղաքական տարբեր մարտահրա-

վերներին դիմակայում էր գերհզոր ԽՍՀՄ-ը, ապա նրա փլուզման հետևանքով Հայաստանը և մյուս նոր անկախացած պետությունները մարտահրավերների դեմ մնացին միայնակ: Արմատապես փոխվեց աշխարհաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում և Հայաստանի շուրջ: Հիշենք, որ արտաքին քաղաքականությունը պետության գործունեությունն է միջազգային ասպարեզում:

3. Վրաստանը Հայաստանին սահմանակից չորս երկրներից միակ քրիստոնեական պետությունն է, բայց այդ ներուժը լավ չի օգտագործվում: Հայ-վրացական հարաբերություններում առկա դրականի հետ մեկտեղ (երկու ժողովուրդների կրոնի, մշակույթի, ավանդույթների, պատմական ճակատագրի ընդհանրություն), կան ջավախահայության հետ կապված և լուծում պահանջող սոցիալ-տնտեսական, նաև քաղաքական մի շարք այլ հիմնախնդիրներ:

Իրանի հետ Հայաստանի բարիդրացիական հարաբերությունները հաջողությամբ զարգանում են առևտրի, զբոսաշրջության, համատեղ ձեռնարկությունների կառուցման, տրանսպորտային, գիտամշակութային և այլ ոլորտներում: Իրանը, պատկանելով մահմեդական քաղաքակրթության պարսկական ենթամշակույթին, պատշաճ խնամք և հոգատարություն է ցուցաբերում նաև քրիստոնեական արժեքների՝ եկեղեցիների և վանքերի նկատմամբ:

4. Միջերկրականի ափերից դեպի Կենտրոնական Ասիա և ՌԴ, Վոլգա-Ուրալյան և արևելյան շրջանների զգալի մասում, դեպի Չինաստան և Խաղաղ օվկիանոսի ափեր ձգվող այդ հսկայական տարածքում ապրում են թուրքալեզու բազմաթիվ ժողովուրդներ (քարտեզով գտե՛ք այդ տարածաշրջանները և կազմե՛ք թրքախոս ժողովուրդների ցանկը):

2021 թ. փետրվարի դրությամբ ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ ուներ ՄԱԿ-ի անդամ 179 երկրների հետ: Հայաստանն անդամակցում է ՄԱԿ-ի բոլոր կառույցներին, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ ԱՊՀ-ին, Եվրախորհրդին, Սևծովյան տնտեսական համագործակցությանը և համաշխարհային ու տարածաշրջանային այլ կազմակերպությունների: Մի ժամանակ ՀՀ գլխավոր ռազմավարական դաշնակիցը Ռուսաստանի Դաշնությունն էր, որի հետ ուներ քաղաքական, տնտեսական, գիտամշակութային սերտ կապեր: Այժմ հայ-ռուսական հարաբերություններում հակասություններ կան, որոնք աստիճանաբար խորանում են: Ուկրաինայի հետ պատերազմի մեջ գտնվող Ռուսաստանն ասես հեռանում է իր ռազմավարական դաշնակից Հայաստանից:

5. Եթե մինչև 1990-ական թթ. աշխարհը երկբևեռ էր՝ ԱՄՆ և ԽՍՀՄ, սոցիալիզմի համակարգի փլուզումից հետո դարձավ միաբևեռ՝ ԱՄՆ ուժային կենտրոնով, ապա XXI դարում աշխարհը կունենա աշխարհաքաղաքական տարբեր հզորության մի քանի ուժային կենտրոններ՝ ԱՄՆ, Եվրոպա, Չինաստան, Ճապոնիա, Ռուսաստան, հնարավոր է նաև՝ Հնդկաստան, Բրազիլիա: